

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 Ձր.

Վեցամսեայ 6 Ձր.

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան . . . 12 Ձր.


Վեցամսեայ . . . 7 Ձր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօշար

Վեցամսեայ 1.50 "

ԿԱՆԵԻԿ



ԼՐԱԿԻՐ

ԱՋԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՐԵՆԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՅԷ

Redaction du Journal

"Le Voudak"

VARNA (Bulgarie)

Редация

на ВѢСТНИКЪ

Кравуникъ

ВАРНА

Կրտսրոշիւնք եւս չեմ տրուիր

Ծանոցման տողը 20 սանթիմ

ՀԱՅ ԿՂԵՐԸ

Ժամանակ մը մեր եկեղեցականները տրտունջ կը յայտնէին թէ ազգային լրագրութիւնը իրենցմով շատ կը զբաղի, խմբագիրները իրենց բան գործըրած են քահանաներուն օձիքէն բռնել և կծու խօսքերով զանոնք ձաղկել:

Տարիներէ ի վեր հայ մամուլը գրեթէ դադրած է մեր եկեղեցականներով զբաղելէ, ուրովհետեւ իրարու յաջորդող ազգային աղետները եւ յեղափոխական կազմակերպութեանց քննադատելի շատ մը կողմերը անսպառ նիւթ մատակարարած են ազատ մամուլին, այնպէս որ սա շատ քիչ անգամ ժամանակ ունեցած է հայ քահանաներով ու վարդապետներով ալ զբաղելու: Հայ խմբագիրներէն մօտէն դէպի եկեղեցականները արհամարհանքով մը վերաբերուի սկսած են, և ոմանք «այդ էսնաֆէն խալիբ չկայ» ըսելով անոնց քէն ըրածի նման կը վարուին: Սակայն հայ կղերին մեր մէջ տակաւին կատարելիք գերին կարեւորութիւնը մենք ըմբռնած ըլլալով, չենք ուզեր բոլորովին երեսէ ձգուած եւնաֆ մը նկատել զայն, և պարտք կը զգանք մերթ իրմով զբաղիլ:

Պարտաճանաչ և իր նուիրական կոչման անձնուէր հայ կղերը Կովկասի մէջ եկեղեցական կալուածներու գրաւման միջոցին ինքզինք ցոյց տուաւ, իրեն գլուխ ունենալով Հայրիկը: Հոն յայտնուեցան նաեւ թուրքմոթ և վատասիրտ շատ մը եկեղեցականներ որոնք նկրտեցան իրենց պետին վեհանձն ու ազգօգուտ հրամաններուն չանսալ ու երթալ համակերպիլ ռուս պաշտօնէին հայադաւ հրահանգներուն, որպէսզի իրենց անձնական անդորրութիւնը չը վերադուրի եւ կառավարութեանէն չը հալածուին: Եւ վերջապէս յաղթանակը տարաւ իր կոչման անձնուէր հայ կղերը իր յամառ

ընդդիմութեան և օրինական բողոքներուն շնորհիւ իրեն գործովիդ ունեցած ըլլալով աշխարհական ուժերու կարեւոր մէկ մասի խորխուրթիւնը: Հայ կղերին յաջողապէս կատարած գերին այս թարմ, օրինակը մեզ կազմատէ պատմական ուրիշ փաստերու դիմելու ճանձնողութէն, ապացուցանելու համար թէ կղերականութիւնը ազգային գոյութեան պահպանումին մեծագոյն մէկ ազդակն է, և հետեւապէս մենք իրաւունք ունինք երեսէ ձգուած ու անպէտ եւնաֆ մը չը նկատելու զայն:

Արտասահմանեան հայ գաղթականութեանց մէջ կղերը կարծես աւելի կարեւոր դերեր ունի քան մայր հայրենիքին մէջ: Օտար երկիրներու մէջ հոս հոն ցրուած ցանցաւ հայութեան գոյութիւնը աւելի վտանգներու ենթակայ է, նոյնիսկ քաղաքակրթութեան չպարին տակ չը ռալլուած կեղծ ազատութեան պատճառաւ: Պարտաճանաչ և հարկ եղած բարեմասնութիւններով օժտուած հայ կղերը արտասահմանի մէջ խիստ բազմակողմանի դերեր ունի կատարելու: Եկեղեցական, ընտանեկան, կըրթական, քաղաքական եւ յարաբերական մեր բազմատեսակ գործերը գերազանցօրէն կղերին նախաձեռնութեան և առաջնորդութեան կը կարօտին: Այս գործերը մի առ մի բացատրել հոս երկար պիտի ըլլայ: ուշիմընթերցողը ինքնին կրնայ ըմբռնել զանոնք, և առանց երկբայելու եզրակացնել թէ, արտասահմանեան մեր հայ կղերը փոքր բացառութեամբ մը, բոլորովին անտարբեր է իր ուսին ծանրացող այդ էական գործերու մասին: Գործեր որոնց լըումը հայ գաղթականութեանց փրկագրութիւնը և կորուստը առաջ կը բերէ:

Այս գերազանց պարտականութեանց հանդէպ ի՞նչ գործ կը տեսնէ մեր արտասահմանեան հայ կղերը կամ գաղութի մը աւազներէն:

—Ոչինչ, բացարձակապէս ոչինչ: Ան ամէն ինչ թաղ խորհուրդի մը կամ հոգաբարձութեան մը տարտամ ու կասկածելի խնամքին յանձնած, իր բոլոր գործունէութիւնը ժամկարգաւ, մեռել թաղելու, իրեն դիմող զոյգերը պսակելու, երախայ մկրտելու, յիշմունք ժողովելու և գանձանակ պտըտցընելու մէջ միայն սահմանափակած է: Նա շատ անգամ այս մեքենական գործերուն մէջ իսկ կը թերանայ: Կը թողու որ հայ երիտասարդներ օտարուհի հետ օտար եկեղեցւոյ մէջ պսակուին: Երիկ ունեցող հայ կիներ օտարներ առնեն և օտար ծէսով կրկնամուսնութիւն կատարեն, հայ երախներ օտար եկեղեցւոյ դրոշմը ընդունին: Իր հօտը պակսեցնող, իր հօտը ցրուող, ժողովուրդը հայ եկեղեցիէն հեռացնող այս և այսօրինակ դէպքերու առջեւ հայ կղերը կամ աւագերէցը մեռելային անտարբերութիւն ցոյց կուտայ: Բայց երբէք չը ներեր որ իր մէկ երկու ֆրանքը երկու օր մը նայ եկեղեցւոյ դրամարկղին մէջ: ասոր համար կուգայ ձապը ձապը կը կուտի խորհրդաւրանին մէջ թաղականներուն ու քարտուղարին հետ, առանց ուշադրութիւն ընելու որ հոն այդ վայրկեանին մէջ հայ մը պուլկարուհի մը հետ բռնութեամբ Օրթօթօքս եկեղեցիի մէջ պսակուելու խնդիրը կը յուզուի: (*)

Հայ կղերին հանդէպ իր նուիրական կոչման այս դատապարտելի կեցուածքը խարաղանելի հայ մամուլը պարտքն է: Մենք պիտի ջանանք չը թերանալ մեր այս պարտքին մէջ:

(*) Ականջը խօսի վառնայի մեր Տէր Մարտիրոս հօր:



ԲԱՂԱՔԱՎԱՆ

Խաղաղութեան կնքումը թէեւ ձարոնցի ժողովուրդին մէջ զգոհութիւն առաջ բերաւ եւ ցոյցերու տեղի տուաւ, բայց Ռուսիոյ մէջ ատոր հակառակը պատահեցաւ: Եւ արդէն կը սպասուէր որ ռուս ժողովուրդը առանց կուսակցական խնդրութեան, գոհ մնայ խաղաղութեան լուրէն: մանաւանդ թէ սպասուածին չափ աննպաստ պայմաններով չէ կնքուած դաշնագիրը: Բայց ասով հանդերձ Ռուսականութեան զգացումը մը կայ ու պիտի մնայ Ռուսերու սրտերու խորքը: «մենք չպիտի կրնանք մոռնալ երբէք այս ամսթալի պատերազմը, մենք չպիտի կրնանք տանիլ այս դրութիւնը» կաղաղակեն շատ թերթեր, երկու թըշնամի բանակներու վերին հրամանատարներու մէջ ալ գինադադարի պայմանագրութիւնը կնքուեցաւ Մանչուրիոյ համար: մինչեւ որ խաղաղութեան դաշնագիրը երկու կայսրերէն վաւերացուի, Մանչուրիոյ բանակները իրարու դէմ յարձակում չպիտի ընեն: Իւրաքանչիւր իր գրքուած դիրքին մէջ պիտի մնայ եւ զինուորական փոխադրութիւն տեղի չպիտի ունենայ: Սակայն ինչ եւ Քօրէյի մէջ գտնուող երկու թշնամի կողմերուն մէջ ալ զինադադար կրնէք լու բանակցութիւն ոկսած է:

Ռուսիոյ ներքին գործերուն գալով, նախարար Պուլիկին իր հրաժարականը տուած էր: Բայց Չարը խնդրեց որ չարունակէ ներքին գործոց նախարի պաշտօնը մինչեւ որ Ազգ ժողովը, Տուման գլուխարուի: Երեսփոխաններու ընտրութեանց հետապառկերը երկրին բոլոր կողմերը մտքերը կըբազմեցնէ: զժողովները արհամարելի թիւ մը չեն կազմեր թէեւ, բայց Չարը կերեւայ թէ երկրին խաղաղացման գործը այլեւս ապահովուած նկատելով կը պատրաստուի այսօրեւ ձարուհիով եւ զաւակներովը միատեղ Տարմոյաւ երթալ քանի մը շաբաթներ հոն մնալու համար: Կը հաւատաւ թէ հոկտեմբեր ամսոյ մէջ Գերմանիոյ կայսրը ու կայսրուհին Տարմոյաւ մէջ այցելութիւն պիտի տան Չարին ու Չարուհւոյն:

Անգլիոյ եւ ձարոնի մէջ նոր դաշնագրութիւն մը կնքուած ըլլալու լուրը կը չըջէր ժամանակէ մը ի վեր: այսօր այդ լուրը հաստատուած իրողութիւն մը կը նկատուի այլեւս: Դաշնագիրը օգոստ. 12 ին կնքուեր է:

տիրացած է այլևս թագուն գաղտնիքին իր կապիւնները դաւադրութեան մը մասին, իրականացած են Կլոսիոս թունաւորած է իր հայրը պարսէզին մէջ եւ մայրն ալ համաձայն գտնուած է այս վատ ոճրագործութեան :

Այն ատեն Համլէթ այս վեհաշուք վայրկեանին, հօրը սուրբազանին կեանքը անպատճառ վրէժխնդրութեամբ ըլլալ ցած Կլոսիոսէն : Ասկէ վերջն է որ Համլէթի կեանքին իրական ողորդութիւնը կ'սկսի : Միտքը լուծելիք վրէժին գաղափարով ձգտած է արքունիքին մէջ ծածուկ բան մը չէ Համլէթին լուծելը, բայց տակաւին ոչ ոք կրցած է հասկնալ անոր վիշտին իրական պատճառը : Պարտականութեան ձայնը յատուկ կը մղէ Համլէթը, բայց ան անվճարական, չուարած կանգ կառնէ մահուան գաղափարին առջեւ եւ յետոյ կուգէ աւելի վատար ըլլալ Կլոսիոսի եւ մօրը ոճրագործ արարքին վրայ : Ասկէ վտար լուծել ինքնախաղաղութիւն մըն է զոր Համլէթի պէս վճռական քայլ մը առնելու մղուած մարդիկ կը փորձեն իրենց անտրամաբանական ձգձգումները իրենց խղճին առջեւ արգարացնելու համար : Սակայն վրէժխնդրութեան պահանջող հօրը տխուր ուրուականը կը խթանէ իր մէջ պարտականութեան ձայնը որուն կը լսէ ան յօժարութեամբ : Պատահականութիւններ կը ներկայանան սպաննելու Կլոսիոսը, բայց Համլէթ սա կամ նա պատճառով չ'սպաննիր տակաւին զայն : Պայքարը որ Համլէթի հոգիին խորը կը յուզուի անվերջ է, եւ ան երբեմն զգալով թէ բաւական խիզախութիւն չունի իր յառաջադրած նպատակին գործադրութեան համար, ինքզինքն զէմ կը սրտնեղի, կը բարկանայ, վատ կը կոչէ իր անձը :

Համլէթի այս անվճարականութիւնը կը շարունակուի, որքերգութեան սկիզբէն մինչեւ վերջը, եւ այդ երկու եղբրներու միջեւ տառապող ազդու հոգին անզուգական է իր փրկի-ստիպարութեան մէջ : Արդարեւ Համլէթ վերջապէս կ'սպաննէ Կլոսիոսը, բայց ինչպիսի պարագաներու տակ եւ ինչ շարժառիթներէ մղուած :

Համլէթ յաջողեցաւ իրապէս պարտականութեան սահմանին մէջ հօրը մահուան վրէժը լուծել : Թող ընթերցողը պատասխանէ իրեն համար :

Դ.

Ասկիւ է Շէքսպիրի որքերգութեան Համլէթը : Ըմբռնելու համար այս բարձր գործին բոլոր գեղեցկութիւնները, հարկ է մեզի կանխաւ ուշիւնալ դատելու կիրթ ճաշակ եւ պահանջներու դաստիարակութիւնը : Եւ որովհետեւ Համլէթ միջակ հմտացականութիւն մը չէ, այլ սովորական մարդոցմէ վեր միտքի բարձր իրողութիւններով օժտուած անհատ մը, հետեւաբար, իր կեանքին եւ խօսքերուն խորունկ փիլիսոփայութիւնը չի կրնար չ'հաղորդուած ըլլալ մեզ :

Չեմ կարծեր որ ներկաներն ալ իրապէս համ մը առած, մեծ հաճոյք մը զգացած ըլլան անոր ներկայացումէն, ընդհակառակը, կը մղուիմ են թաղելու որ նոյն իսկ շատեր բացարձակապէս անկարող եղած ըլլան գէթ պատմութիւնը որոշապէս հասկնալ, դէպքերու ընթացքին համեմատ :

Այս բարձր իմացականութեան տէր, իմաստասէր, թախծալից, մտատանջ,

պարտաճանաչ բայց անվճարական Համլէթն էր որ պիտի ներկայացնէր մեզի պ. Գալֆանան : Յաջողեցաւ իր գերին մէջ, գիտել տուինք արդէն որ ակնհայտաւ ազդուութիւնը չունեցաւ :

Ներկայացումը իր ամբողջութեան մէջ կարելի չէր յաջողութիւն մը նկատել, մասնաւորեւ կը ցաւինք զիսկու որ պ. Գալֆանան արուեստագէտի աւելի բարձր, աւելի տպաւորող կարողութեամբ մը դուրս չեկաւ : Ասիկա ըսել չէ անշուշտ թէ ինչ ինչ տեսարաններու մէջ իրապէս ծափահարելի յաջողութիւններ չունեցաւ, ընդհակառակը, Թողնկրանցի եւ Գիլ-Պիլիանցի հետ տեսութեանց միջոցին, երբ Օֆէլիայի հետ կը խօսէր, եւ երբ ներկայացումով մը կուգէր մօրը եւ հօրեղբորը ոճիւրը ապացուցանել, ցուցոց մեզի թէ բոլորովին զուրկ չէ ճշմարիտ գերասանի մը յատկութիւններէն, եւ թէ հետզհետէ մը չ'ակունելով իր ընդունակութիւնները կրնան գնահատելի զարգացման մը հասնիլ :

Ինչ որ մեզի համար մասնաւորապէս պ. Գալֆանանի անյաջողութեան մէկ որոշ պատճառը կը թուի ըլլալ իր ձայնն է : Կրքոտ յուզումներու, դժգոհանքներու, անսահման վիշտէն ծնունդ առնող պոթկուսներու միջոցին, երբ արտաքին շարժումներ եւ դիմագծութեան այլափոխումը ներքին փոփոխելը կը յայտնեն, յաճախ ձայնը զուրկ կը մնայ պարագային պահանջած շեշտէն եւ թրթռումէն : Ասիկա գերին ազդուութիւնը ծնունդն է կրնէ եւ արտադրուելիք հմայքը կը վիժի : Հետեւաբար ձայնի այս աննկարագիւրութիւնը արտայայտուելիք զգացումին եւ գաղափարին հետ պատճառ եղաւ որ երբեմն պ. Գալֆանանի Համլէթը բռնազբօսիկ եւ կեղծ երեւոյթներ մը առնէ :

Համլէթի նկարագիրն յատկանշող մտախոհ թախծութիւնը, որ հանդիսանալով իրեն հանդէպ համակրութեամբ եւ վիշտով համակելու գործութիւնն ունի, հարկ եղած չ'ափով պ. Գալֆանանի մէջ չի տեսնուի : « Ըլլալ կամ չըլլալ » ի գերազանցօրէն հրաշալի մենախոսութեան մէջ, ծանր մտածութիւն արտադրած գաղափարին խորունկ հայեցողութիւնը ո'չ երեւոյթով եւ ո'չ ալ ձայնին չեղումով կրցաւ ազդեցիկ արտայայտութիւն մը ունենալ : Իսկ այն սարսաղեցիկ տեսարանին մէջ, երբ Համլէթ մօրը յանցանքը երեսին կուտայ, որպէսզի իր չուրջը, իր սէջ յուզուող զգուշիկ աղտոտութիւններուն նայի, պ. Գալֆանան իր գերին մէջ կրնար նկատուել, բայց Պոլսիոսի վրայ քիչ մը անյարմար կերպով կատարուած սպաննութիւնը բաւական ծիծաղի պատճառ տուաւ : Համլէթի, գերեզմանատան մէջ գանկին վրայ ըրած փիլիսոփայութիւնը կրնար շատ աւելի խորհրդաւոր ազդեցութիւն մը ունենալ, ինչ որ չունեցաւ գերադաբար :

Շէքսպիրի պէս տիեզերահզակ վարպետի մը է՞ն համբաւուած գործը ներկայացնելու համար, անշուշտ ինքնավտան յաջողութիւն եւ գերասանական յայտնի կարողութիւններ կը շնորհակալեն : Դժուարութիւնները շատ են, եւ սկսնակներու համար շատ հաւանականութիւն կայ առաջին քայլին իսկ սահելու : Անշուշտ պ. Գալֆանան վարպետ մը չէ, եւ հակառակ իր շատ մը թերութիւններուն մենք կը յուսանք

հաւատալ թէ հետզհետէ մշակուելով եւ կատարելագործուելով, իր այս նախաձեռնած ասպարէզին մէջ կրնայ ապագայ մը ունենալ :

Դ.

Համլէթը, որքերգութեան մէջ չարժող գլխաւոր դէմքն ըլլալով, անշուշտ, մեր ուշադրութիւնը մասնաւորապէս անով պիտի գրաւուէր : Սակայն որքերգութեան երկրորդական գէղեցիկ մէկ երկուքը մեծ կատարութիւն ունին եւ զուրկ չեն չ'անկանութենէ իրենց նկարագիրներուն սա եւ կամ նա առանձնապատկութիւններուն համար : Պոլսիոս, Օֆէլիա, Գերեզմանփորը եւ Չորացիօ անմահացած գիւրիկն են : Կան նշանաւոր գերասաններ որոնք իրենց անմահանալի համարը տանցմէ մէկ կը կամ միւսը յաջողապէս ներկայացնելով չնայեն : Ներկայիս, Ֆրանսայի այր գերասաններէն է՞ն համարուածներէն մէկը, այս խաղին մէջ Գերեզմանփորին գեղը կատարելով կը բաւականանայ, եւ ասիկա փառքի եւ հպարտութեան ոչ չ'ընչ պատճառ մը չէ իրեն համար :

Շէքսպիրի ներկայացուցած կանացի գէղեցիկութեան մէջ իրապէս նշանակելի գիրք մը կը բռնէ Օֆէլիան, այդ համակերպող, հնազանդ, մաքուր, հեղաբարոյ եւ լոկի սիրող աղջիկը, որ դժբաղդ զո՞ մը կըլլայ պարտաճանաչ անձնութեան եւ ծնողական վտանգներով : Ու եւ յաջողապէս կատարուած ներկայացումի մէջ Օֆէլիայի մեղանշ, որքերգական գէղեցիկ անկարելի է որ հանգիստանալու աչքէն արցունք չի քսուէ եւ դառն վիշտի մէջ չի յուզէ զանոնք :

Շէքսպիրի մէկ ուրիշ որքերգութեան մէջ—Ռոմէո եւ Յուլիէթ—Օֆէլիայի մէկ ուրիշ տիպարը կը գտնենք—Ժիւլիէթ :

Օֆէլիա, հիւսիսի գերազանցապէս հեղաբարոյ, երկնաւոր սիրող եւ ինքն իր մէջ հասնող աղջիկն է : Ժիւլիէթն ալ հարաւոր աղջիկ՝ վաւերուն, իր սէրին մէջ խիզախ, որուն համար ան կը մոռնայ ամէն բան, ամէն բան այդ աշխարհին վրայ :

Սակայն հակառակ այս տարբերութիւններուն, անոնք Շէքսպիրի գծած կանացի գէղեցիկութեան հրաշալի գոյգը կը կազմեն : Երկուքն ազգայնութեան մէջ, անզուգական անձնուէր իրենց սիրոյն մէջ, նկարագրով մաքուր ու լուսավոր ինչպէս շողորմ երեսին կամ ցօղը՝ խնկելի ծաղիկի մը բաժակին ծոց :

ՎԱՂԱՐՇ

ԱԶԳԱՅԻՆ

Պոլսոյ թերթերէն Կիւմանանք թէ հանրաժանութեան մատեր Գրիգոր Գարակէօզեան մեռած է անցեալ ուրբաթ գիշեր : Յուղարկաւորութիւնը ըստ ծանուցման կատարուած պիտի ըլլայ կիրակի օր :

Շրուսաղէմի եււմտէջ նոր տեսուչը Պոլիս կուգայ, անշուշտ նախորդ տեսուչ Ղեւոնդ վարդապետի զեղծութեանը ապացուցանելու համար : Պոլսոյ Պատրիարքարանին միջոցաւ կատարուելու վրայ եղող հաշուեքննու-

թեան մասին լուծութիւն կը պահեն պոլսական թերթերը : Կերեւայ թէ զուտ հաշուական խոշորներու մասին տեղեկութիւն հաղորդելն ալ միջոցիկ նկատուած է :

—Չափահաս հրեայ աղջիկ մը քրիստոնէութիւն ընդունելու համար հայ եկեղեցւոյ գիմնաւում ըլլալով : Պատրիարքարանի որոշմամբ ու կարգադրութեամբ անցեալ օր մկրտուած ու Սրբուհի կոչուած է : Եւ այս անշուշտ հայ երիտասարդի մը հետ ու մոսկաւալու բաղձանքէն մղեալ :

—Պուլկար գիւղացի աղջկան մը հայ երիտասարդի մը հետ ամուսնութեան գործը տակաւին կերկարածգէ տեղոյս Պուլկար Առաջնորդարանը, Յունական ֆանատիկութեամբ թունաւորուած պուլկար քահանաներ կերեւայ ներքի չեն ուզեր որ պուլկար աղջիկ մը հայ եկեղեցւոյ ծէսով պսակուի : Պուլկարիոյ ագաթաւիտ կառավարութեան արատ կը բերէ իր կղերիկն այս վարժուող երբ սա անդին առանց հարց ու փորձի չը վարանիր պսակել հայեր ու հայուհիներ պուլկար կենակիցներու հետ : Պուլկար կառավարութեան և ժողովուրդին ազատամիտ ոգին չը ներեր որ իր կղերը այսպէս վարուի քոյր եկեղեցւոյ մը մասնաւոր հայկականին հանդէպ : Ուստի մեր թաղականները օգտուելի դիտնալու են փյուղազատամտութեան և խնդիրը լրջօրէն ներկայացնելու են հարկ եղած տեղը :

—Փիլաւիտ թերթի Պոլսոյ թղթակիցը կը կարծէ, կրնէ Լուսաբեր թէ, Աբիկ էֆ. Ունեհանը սպաննողը պատկանի Գրոշակեան յեղափոխական կուսակցութեան, որ Հայկական դատին համար Աբիկ էֆ. է խոշոր գուժար մը պահանջած է և այս վերջինը մեծածա ըլլալով մահուան դատապարտած է :

—Թան կը հաղորդէ թէ Աբիկ էֆ. Ունեհանը սպաննողը Հնչակեան մը եղած է և այս սպանման առթիւ իզմիլի կուսակալը կախապահ հանել տուած է Պետրոս անուն անձը (Գրոշակեան) որ տեղացի հարուստ Պալեօղեանը սպաննած էր :

—Լուսաբերի մէջ կը կարդանք :

« Պարսկաստանի Ռէշտ քաղաքի հայերէն Պ. Ա. Յորդանեան ի յիշատակ իր որդւոյն կառուցանել կուտայ մեծ շէնք մը, որ միանգամայն իր մէջ պիտի պարունակէ դպրոց, թատրոն, գրադարան—ընթերցարան, ուսուցչանոց և սենեակներ՝ գիշերօթիկ աշակերտներու համար : Այդ շէնքին համար ծախք կը հաշուէ մոտաւորապէս 150,000 ֆրանք :

բայց պարունակութեան խնդիրները գտնուելու կը պահուի : Կայացած համաձայնութիւնը սաշափ կը յայտնուի թէ երկու կողմերը փոխադարձաբար զիրար կը վստահանան ասպակովեւ համար բրիտանական եւ ճարտնական շահերը , նոյն իսկ ասոնց միայն մէկ պետութեան կողմէ վտանգուելու պարագային : Այդ համաձայնութեամբ կապահովեն Մարտի 11-ը եւ իր քիմիկայի վիճակին պահպանումը : Վերջապէս , այն պարագային յորում եթէ Հնդկաստան վտանգուի , ճարտնական պարտաւորութիւն Անգլիոյ տրամադրութեան տակ զենքի այնչափ զինուոր որչափ ինք հոն համարմբէ , ծախքը Անգլիոյ կողմէ վճարուելու պայմանաւ :

Կը կարծուի թէ նոր համաձայնութիւնը կատարելապէս յարձակողական եւ պաշտպանողական դաշնագրութիւն մը եղած ըլլայ :

Մարտի 11-ը ինքիւ առաջին իր քիմիկայի վիճակին պահպանումը կորսնցուց , «մինչ ցնոր տնօրինութիւն» . Այժմ այդ երկու մեծ պետութեանց մէջ բանակցութիւնը կը շարունակուի Մարտի մասին դեսպանափոխութիւն մը գումարման համար . Գերմանիան իր կարգ մը առաջարկներու մէկ քանիքն հրաժարած է . Ֆրանսան ալ Մարտի 11-ը Գերմանիայէն փոխառութիւն կնքելուն եւ նաւարանի մը շինութեանը հաճութիւն տուել է : Ուստի կը սպասուի որ վերջնական համաձայնութիւնը կայանայ նոյնիսկ այս շարժում մէջ : Երբեք կը տարբեր թէ դեսպանափոխութիւն տեղը եւ ժամանակը որոշուած է :

Մարտի 11-ը սահմանին մէջ Ֆրանսահան հպատակ մասնատականի մը ձերբակալման մասին Ֆրանսայի եւ Մարտի 11-ը միջեւ յարուցուած վեճը ի նպաստ Ֆրանսայի կարգադրուեցաւ , ինչորոշ այս վերջինիս սպառնալիքին Սուլթանը գոհացում տուաւ եւ ներողութիւն խնդրեց : Ասով անգամ մըն ալ ապացուեցաւ թէ այս դարու մէջ իրաւունքը միշտ ուժեղին է :

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

Պագուէն օգոստ . 23ին գրուած ընդարձակ թղթակցութիւն մը կը սեղծէ առաջին զէպէն ի վեր , որ փետրուարին տեղի ունեցած էր Պագուի Թուրքերը անտանելի էին . հետեւին չէր խօսուեր , փոքր ընդմիջութեամբ մը անմիջապէս հայոյններով եւ դաշուին սպառնալիքով կը պատասխանէին : Թուրքերու այս սպառնական վարձուքէն կը յայտնուէր թէ նոր փոթորիկ մը կ'սպասէ հայերուն : Պագուի այս վերջին զէպէն 21 ին սկսած է . առկէ քանի մը օր առաջ միամիտ թուրք գիւղերապահ մը պատմած է թէ իր թուրք տէրը իր գործաւորներուն ըսած է որ քանի մը օր աշխատանքը դադարեցնեն , որովհետեւ անկարգութիւններ պիտի լինին : Նոյն թուրք պատմած է նաեւ թէ քանի մը օր առաջ թուրք մեծատունները նահանգապետին գացած են յայտնելու թէ մեր Լոյսիքիները այլեւս կարող չենք զսպել , անոնք կուղեն անպատճառ « Բուռթ » սարքել : Նա-

հանգապետը անոնց պատասխաններէ որ եթէ հանգիստ կենալ չեն ուզեր , ասպարէզ թող դան , ես դանոնք կը զսպեմ : Պագուի նահանգապետ Ֆատաթէփի վարձուքը իրօք այս անգամ շատ գովելի եւ ազդու եղած է . յարձակող թուրքերուն վերայ անխնայ կրակ տեղացուցած են զինուորները , բայց ասոնց թիւը անբաւական ըլլալով գրեթէ յարձակող խուժանի բազմութեան բաղադրամասը կարելի չէ եղած աղէտին առջեւ բողբոջելու առնել , թէեւ Պագու քաղաքը ըստ բաւականին պաշտպանուած , բայց չըջակայ աւանները , քարեղի հանքերը եւ շտեմարանները ու բանուորները մոլորոյ եւ աւերակներու վերածուած են յարձակող խուժախուժանին ձեռքով :

Դէպքը սկսելուն երրորդ օրը Պագուի ընդհանրահապետը հայ եւ թուրք ազգաբնակչութեան ներկայացուցիչները խորհրդակցելու կը կանչէ խաղաղութիւնը վերահաստատելու համար . ժողովը եղբակացութեան մը չի հասնիր . Թուրքերը ամէն ջանք կը թափեն յանցանքը հայերուն վրայ ձգելու : Նահանգապետը կը կարծէ թէ Պագուի այս երրորդ զէպէն շատ բան պիտի պարզէ :

Փարպի գիւղէն Մշակի գրեն թէ Օչի գիւղի հայերուն դէմ կ'ուսելու գացող թուրքերը անյաջող ետ դարձած են : Այս անյաջողութենէն յետոյ թուրք գիւղերու մէջ հայերը կոտորելու համար կոտորուեցաւ Կոմիսիոն (այդ մասին տեղեկութիւն ունի տեղեւոստիկանութիւն ալ կը սեղծուի անգամ) որոշում կ'ուսանի թուրքերը զինել հարուստներու հաշուով : Հաճի-Նաիր օղլու հարուստ թուրքէն այդ Կոմիսիոնը որոշ գումար մը կը պահանջեն . նա կը մերժէ վճարել : Կոմիսիոնը կորոշեն անկէ ծանր տուգանք մը առնել բռնի : Հաճի-Նաիր օղլուն այս վերջի որոշումը իմանալով , Փարպի ոստիկանապետին կը դիմէ ու կը խնդրէ որ իր ծննդավայր գիւղը գտնուած գոյքերը եւ խանութին ապրանքները ոստիկանութիւնը Փարպի փոխադրէ եւ տնօրէնի զննելով ծախէ , որպէսզի ինքը առանց ծանրութեան փախչի ապահով կողմեր : Ոստիկանութիւնը կը կատարէ Հաճի-Նաիր օղլուն խնդրանքը օգոստ . 11ին :

Այս իրողութիւնն ալ պաշտօնապէս կը հաստատէ թէ հայերը ջարդելու համար Կովկասի թուրքերը գոմիթէներ կազմած են կանխաւ :

Մշակի հետազոտները Բագու օգոստոս 23. — «Թուրքերը Երզնէիցին նախաձեռնեցին Բալխանում եւ Բիբի-Էյբաթում : Նախաձեռնեցին մեծ մասը պատկանում է Հայերին : Զորքերը անկարող են պաշտպանել : Գիւղերայ նահանգապետի կարգադրութեամբ , հայ ազգաբնակչութիւնը գաղթում է Բալխանից : Գէպի քաղաք : Ոստիկանութիւնը նախապէս զինաթափ է անում նրանց : Ազգեցիկ թուրքերը իրանց գործած չարքերը ամեն կերպ աշխատում են փաթաթել հայերի վրէժ : Թուրքերը սպանել են մի քանի կազակներ եւ զինուորներ : Գիւղերայ-Նահանգապետը գործում է խիստ , բայց արդարացի : Բագուի եւ Բալխանի շրջանում սպանվածները եւ վերաւորովածները թիւը անցնում է հարիւրից : Բոլոր մագազինները , գրասենեակները եւ բանկերը փակված են : Կանքը կանգ է առել քաղաքում » :

Եւ Կանքը կանգ է առել քաղաքում » :

Հին-Նախիջևան օգոստ . 23. — «Երբեք եւ քննեցի 20 վերջում գիւղեր , ժողովրդի վիճակը անտանելի եւ խղճալի է , կողոպտված կայքերը եւ անասունները չեն վերադարձված . անուշը խիստ վատ է : Դաշտերը չեն հերկված աշուն ցանքի համար : Պէտք է ազգաբնակչութեանը մատակարարել անասուններ , ալյուպէս եւ կող տարի սովոր անխուսափելի կը լինի : Հացով քիչ շատ ապահոված են միայն լեռնային գիւղերը . դաշտի գիւղերում հացի մեծ պակասութիւն է տիրում : Օգոստեան միջոցներ եւ մշակել , այս օրիս կը ներկայացնեն գեներալ-Նահանգապետին : Ուղարկեցէ՛ք մի բոխիկ , երկու ֆելդշեր , զեղորայք : Անկողիններին մեծ կարիք է զգացվում Գիւղատնտես Ա . Սահակեան » :

Բագու օգոստ . 24. — «Նախաձեռնեցին հրդեհները շարունակվում են : Փչում է կատաղի նորքը : Բալխանին մինչեւ վերջն այրվել է : Քաղաքում չեն դադարում հրաձգութիւնները զօրքերի վրայ տները պաշտպանելից եւ կտուրները : Պահանքները պատասխանում են խեղճ բակին կրակով : Զօրքերը չափազանց յոգնել են : Նրանց թիւը քիչ է : Սաստիկ մեծ կարիք կայ մի , հացի եւ ջրի : Երէկվայ փորձերը խաղաղութիւն գցելու՝ աջողութիւն չունեցան : Դրութիւնը սովոր է » :

ՆՈՐԱԳՈՅՆ ՏՆՆԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կովկասի նորագոյն նախաձեռնութեան մասին Մաքեմի մասնաւոր թղթակցիցն , Հաւասի գործնականներէն եւ այլ եւ այլ օտար աղբիւրներէ ստացուած վերջին տեղեկութիւնները .

Բեյրութի Պոլիս 13 սեպտ. — Թուրքերու հաղորդուած հետազոտները կ'ըմբռնեն թէ Ելիզապէթուրքի գաւառին մէջ թաթարները զէնքեր լեցուն կառքերով կը պտուրեն եւ զանոնք իսլամներու կը բաժնեն , հայոց դէմ գործածելու համար : — Նուրի գաւառին հայերը պաշտպանութեան համար զինուորական օգնութիւն խնդրած են բայց ի գուր : — Թաթարաց շարժումը այժմ կը տարածուի Զաքաթալի գաւառը եւ հաւանականաբար յետոյ Տաղստանի նահալն ալ պիտի ծաւալի , ուր արդէն զրգոյումը շատ է : — Հաղարաւորներ Պագուի սարսափներէն փախած են եւ այժմ չեն համարձակիր վերադառնալ կոտորածէն վախճալով :

Կը պատմուի թէ թաթար ոստիկանները հայոց տունները մտնելով պատուհաններէն գուրս կրող կրնան , որպէսզի իրենց կրօնակիցներուն գրգռում աղդեն հայ բնակիչներուն դէմ : Խուճաբով պարսիկներ թաթարներուն յիացած են Հայոց եւ Ռուսաց դէմ կոռելու .

Աղտամի գաւառին մէջ հեծեալ եւ զինեալ թաթարներ Հայերը բռնաշինջ կընեն եւ իջեւանները կայրեն : Աղտամի փողոցներուն մէջ բռնու կոռել կայ :

Խիստ շատ վայրագութիւններ կը պատմուին . ողջ ողջ հայեր բոցերու մէջ նետուած են :

— Կենթադրուի թէ քարեղի ընկերութեանց հարստութիւններուն Յիւր

կորսուած է եւ կորուստը 200 միլիոն ֆր. ի կը հասնի :

Ռուս կառավարութիւնը տարեկան 100 էն 140 միլիոն ռուպլի հասոյթ կը ստանար քարեղի գործերէն : Կառավարութիւնը գոնէ իր այս հազին հասոյթը չը կորսնցնելու համար ժամանակին չարքիքին առջեւ առնելու աշարջութիւնը չունեցաւ :

— Մենգէնտ գիւղին մէջ 300 հայեր ջարդուած են : Տղայոց դիակները շուներուն առջեւ կը նետուին . ողջ մնացած մաս մը հայերը բռնութեամբ կ'իսլամացնեն : Զօրքերուն թիւը անբաւական ըլլալուն հետեւանք կաղաթիւնը տեղի կը փոխանայ :

— Ամասի վանքը կողոպտուած է բոլորովին : Շատ եկեղեցիներ կողոպտուած եւ պղծուած են : Աստուածամօր պատկերը գնդակահար եղած եւ վրան գրուած է « բոլոր քրիստոնեաները պի՛ք են » : Բաղմութիւ փաստեր կան ապացուցանող թէ խաւախուժանին Թշնամութիւնը միայն հայոց ուղղուած չէ , այլ բոլոր քրիստոնեաներուն :

Թիֆլիս 14 սեպտ. — 2000 սօսի ալիսթ-տէմօկրատներ սեպտ. 11-ին (ն. տ.) բռնութեամբ մտան քաղաքապետութեան ապարանք , որ տօնի պատճառաւ գոց էր : Հոն միթիկ մը կազմեցին եւ ճառեր խօսեցան : Ոստիկանապետ հասաւ , հրամայեց ցրուիլ . ժողովուրդին մէկ մասը հնազանդեցաւ ու գնաց , իսկ միւս մասը դուրսը շարուած խաղախներուն վրայ կրակ ըրաւ : 30 մեռեալ եւ 60 վիրաւոր կը հաշուէ :

Մանոթ . Խմբ. — Նորագոյն լուրերը կը հաստատեն թէ կորուստը ցուցարարներէն է . որովհետեւ ասոնց ատրճանակի հարուաններուն եւ պոռնուքներուն զօրքը ստիպուած է պատասխանել զէնքով : Այդ զէպէն պատճառաւ քաղաքապետական խորհուրդը իր ամբողջութեամբ հրաժարեց է , բողոքելով կառավարութեան ձեռք առած այդ խիստ միջոցին դէմ :

« Հ Ա Մ Լ Է Թ » Ի ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄԸ

[Շար. նախորդ թիւէն եւ վերջ]

Բ .

Համբէթ Դանիոյ նախկին թաղաւորին որդին է , եւ գտնին ապագայ ժառանգը : Հօրը մահէն հազիւ ամիս մը վերջ , մայրը , Գերդուտ , կամուսնանայ իր հօրեղորդը Կլէտիոսին հետ : Այսքան շուտով կատարուած ամուսնութիւնը , երբ տակաւին հօրը մահուանը յիշատակը թարմ էր Դանիոյ ժողովուրդին , եւ արքունականներու յիշողութեան մէջ , պատճառ կուտայ Համբէթին կոտորուելու մօրը եւ հօրեղորդը ուղղամտութեան վրայ :

Արքունիքին մէջ կատարուած վատ գործի մը կասկածը կը լեցնէ իր միտքը , ալ հանգիստ չունի , տխուր է եւ մտաւանջ : Ինքզինք սարսափելի գաղտնիքով մը չըմպատուած կ'զգայ , եւ ճշմարտութիւնը հասկնալու համար ի զուր կը խարխափէ անստուգութեան մէջ : Ահա յանկարծ հօրը ուրուականը մէջտեղ կ'ելնէ—Շէքսպիր վարպետ է ազգելու—եւ ստեղծել գաղտնիքը կը յայտնուի : Համբէթ

Գ. Յորդանեան ուրիշ կալուածի մը եկամուտն արտարեկան 6000 ֆր. յատկացուցած է նոյն վարժարանին :

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐՔԻԱ

Ճուման կիւնիւ Սէլամըգ աւայրնտան սօնրա՝ Ս. Ամերիկա էլիսի Սուլթանըն հուզուրընա գապուլ օլընարագ, Պապը Ալի-նին հապս իթտիկի էրմէնիլէրին լէհինէ թէվասիւթ իթտի, վէ սերպէսթ պըրագըլմարընը իտտաա էլլէտի: Պուընըն իւզէ-րինէ տէրհալ Աբիկ էֆէնտինին գաթիլի օլան Վարդանեանը եըլ-աըլ սէրայընա կէթիբուկ իս-թինթաթ իթտիլէր: Վարդանե-ան իֆատէսինտէ՝ Ունճեանը գաթիլ իտէն քէնտիսի՝ ֆագաթ էրմէնի իսթիլալ գամիթէսինին էմրի վէ պաշգալարըն եարտը-մը իլէ ճինայթի իճրա իթ-տիլինի իթիթաֆ վէ իգըր էյ-լէտի: Իշպու իգըրա պինան, մէսէլէ ատի ճինայթի հիւքմին-աէն չըգուպ, բօլիթիգա հալինի քէսպ իթմէքլէ, Վարդանեան բօլիթիգա միւթթէհիմի ատտ օլընաճաղընտան վէ քէնտիսի Ամերիկա թապասը պուլընտը-զընտան, էլլինին իտտասը հագըլ կէօրիւնմիւշ տիր:

Պապը մուխպիրլէր Աբիկ էֆէն-տինին թիւրք հիւքիւմէթին-տէն քիւլլէթիլի ալաճալը օլ-տըղընտան՝ էօտէմէմէք իշին հիւքիւմէթ էօլտիւթտիւ տէ-յօրլար: Պապըլար տախի՝ Վար-դանեան պիր գաշ սէնէ էվլէլ Աբիկ էֆէնտինին խըզմէթինտէ պուլընարագ, հագընտան 50 լի-րա գատար քէսմիշ, վէ պու տէֆա Վարդանեան Ամերիկատան ալ-տէթինտէ մէքըիւր 50 լիրայը իթմէմիշ ֆագաթ ըէտտ օլընմըշ օլմաընտան զարէլլէնէրէք օ-եօլտա ախըլ ինթիգամ իթմիշ տէյօրլար:

Կ Ա Վ Կ Ա Ս Ի Ա

Թաթարլարըն վէ թիւրքլէ-րին ըսեանը տէվամ իթմէքտէ վէ հայրլմագտա տըր: Իշպու հաշարաթա էքտէրի գուրպան կիտէնլէր էրմէնիլէր իտէտէ, ասըլ մագսէտ ըուս իտարէսինի կոլկասիտան գալտըրմագ վէ օրատաքի խրիսթիանլարը իսլա-միյէթէ իճպար իթմէքտէն ի-պարէթ կէօրիւնիյօր, իսլամ ճիւ-հէլայը պու հարաքէթէ ասըլ թէշվիթ իտէն թիւրք վաիլլէրի օլմըլը վէ իշին իշինտէ պաշը-ճա Սուլթանըն բարմաղը պու-լընտըլը թէպէլին օլընըյօր:

Շիմտիլիք էլլէրէճէք գատար ասքէր պուլընմաղը սէպէպլէ իսթիլալ պու տէրէճէ իլէրի կիթտի իտէտէ, հէր թարաֆտան կէօնտէրիլմէքտէ օլան իսպախ-լար վէ ասքէրլէր կոլկասիայա եէթիլմէլէրինտէ իսթիլալը միւսիմանլարըն հալի բէք ֆէ-նա օլաճագ վէ եէյէճէքլէրի շա-մարտան միւթէսիլէրէն պիր տա-հա գըմրտայամազ հալինէ կէլէ-ճէքլէրի շիւքհէսիլ տիր, ֆագաթ օլ վագըլթա գատար ասըլ թէշ-վիթիլէր գաշաճագ վէ ալտանան ճահիլ հհալի թօրուս աղղընա կիտէճէք տիր:

—Հիւքիւմէթ պիր իլաննա-մէ նէշը իտուպ, Պագու վէ ճի-վար իսթիլալընըն մէսուլիյէ-թի խաֆի շիւքէթլէրէ վէ բար-թիլէրէ համլ իտէրէք, տէմիշ տիր քի՝ օլ շիւքէթլէր վէ բար-թիլէր հիւքիւմէթ իտարէսինի թէպալիլ իթմէք մագսէտի ի-լէ հհալի իսթիլալա թէշվիթ-լէ ճահիլ իշինլէրի վէ քէյ-լիւլէրի ալլէթ իտուպ, մէմա-լիք խարապ իտէյօրլար: Եաշ-մայա վէրիլէն վէ զասպ օլը-նան մալլէրի քէյլիլլէրին կէ-րի կէօթիւրմէլէրին հիւքիւ-մէթ իտտաա իտէյօր: Եէնի թէշքիլ օլընաճագ Տումանըն [մէպուսան մէճիլիլէհալիէ պալիշ իտէճէլի մուհասէնաթը մէք-քիւր իլաննամէ պէյան իտէրէք, ասայիշին իպգասը իշին էհա-լիի հիւքիւմէթէ մուալէնէթ իթմէկէ նասահաթ իտէյօր:

—S—

Տ Ա Խ Ի Լ Ի Լ

Բազար կիւնիւ նակիհան զու-հուր իտէն ըուզկեար շէհրիմիլի թօղա պօղմուշ օլմագտան մաա-տա, գարշը եագայա (Ղալաթա) կիթմէք իշին իսքէլէմիլտէն գայըլա օթուրան 5 ըուս կէնճ-լէրի գայըլ իլէ պէրապէր զայպ իթմիշ տիր:

Գայըլըն իլիմանտան տըշարը չըգաճաղը էսնատէ՝ էքսէրի սէր խօշլուղը իլէ մարուֆ պիր կա-կալուզ գայըլգը հավանըն պօ-ղուլմագտա օլտըղընը սէօյլէ-յուպ, կէրի տէօնմէլէրին թալ-սիյէ իթմիշ իտէտէ, բալիգարիա-լար անը զէվլէնէրէք Եօլա տէվամ իթմիշլէր:

—Սթանպօլ պուլկար Ս. էք-զարքը էլան Սօֆիատա պուլըն-տըղը կիպի մէթրօքօլիտլէր տա-խի օրայա թէճէմիւլ օլմուշ-տըրլար: Սուլթանըն էօմրինէ սուի գասթ վագասը ագէպինտէ էքլարքհանէլէ գարշը թիւրք հիւքիւմէթին թէճալիլաթը վէ Մաքէթոնիատա պուլկարլարա գարշը հագարէթ արթմասը Ս. էքլարքըն իսթիլարէ իշին Սօ-ֆիայա կէլմէլէրի ինթաճ էլլէ-միշ տիր: Պու խուսուստա շայի

օլան թէֆէրուաթը Սօֆիատաքի մուխպիրիլտէն պէքլէրիլ:

ՌՈՒՍԻԱ ՎԷ ՃԱՌՈՆ

Բօրթումուտա միւսալէհա ահ-տնամէսի իմզալանտըգտան սօն-րա, Մանչուրիատա պուլընան ի-քի տիւշման օրտուլարը պէյնին-տէ տախի միւթարէքէ մուգա-վէլէսի իմզալանտը, Սուլհ ահտ-նամէսի ըուս վէ ճաբօն իմքէ-րաթօրլարընտան թաստիգ վէ իմզա օլընան գատար իքի տիւշ-ման օրտուլարը Մանչուրիատա ալմէլիաթ իճրա իթմէլէքլէր վէ պուլընտըգարը իսթիլալընա մարտա վէ մէվգըլարտա սիւ-քիւնէթլէ պէքլէյէճէքլէր քէ-զա հէր իքի տէվլէթ ասքէր նագլլէ պէճայիշ իտէմէյէճէք տիր:

—Գօրէալըլար ճաբօնըն հի-մայէսի ալթընա կիրմէք իսթէ-մէյօրլար: Պինլէրճէ գօրէալը-լար վիլայէթլէրտէն թօրլանուպ Սէուլա կիտէրէք բօրթէսիլ իթ-միշլէր տիր:

—Բուսիւնըն տօնանմասընը վէ օրտուսընը եէնիտէն թէշ-քիլ իշին ըուս Սինթը մանաս-տըրլարտան 120 միլիոն ըուպ-լի հիւքիւմէթէ իանէ իտիլմէ-սինի թահիթը գարարա ալտը:

Ս Օ Ն Հ Ա Վ Ա Տ Ի Ս Ա Թ

Բազար կիւնիւ ֆուրթուստա զայպ օլան գայըլգտա պուլը-նան 5 ըուս կէնճլէրին սաղ օլ-տըղլարը Սուգօրլտան պա թէլէ-կրաֆ պիլտիլիլիլ:

—Իթալիատա զէրգէլէ տէվամ իթմէքտէ օլուպ, ըէսմի իսպա-րաթա կէօրէ, 40,000 քիշի մէս-քեանսըլ գալմըշ վէ 4000 քիշի էօլմիւշ:

—Բուսիւնիա վէ Երուսան հիւ-քիւմէթի պէյնինտէ միւնաւէ-պաթ գաթ օլընտըլը Պուգրէշ-տէն պիլտիլիլիլ:

—Բուսիւնիա վիւքէլասընըն սօն գարարը իւրէ, միսիր մահու-լընըն խարիճէ կէօնտէրիլմէսի թէքրար մէնն օլընըյօր:

—Թիւրքիա վէ ճաբօն տէվ-լէթլէրի պիլ միւքէքէրէ՝ Սթան-պօլտա պիր ճաբօն էլլիսի վէ թօքիտա պիր թիւրք էլլիսի գայիմ օլմագ իշին գարար վէր միշլէր տիր: Շիմտիլէ գատար թիւրքիատա ճաբօն մէնաֆիսինի ինկիլիլ էլլիսի մուհաֆաղա իտէր իտի:

—Սթանպօլտան ալընան թէ-լէկրաֆ իւրէ, Արապլար թէք-րար կէրի տէօնիւպ, գարշըլարը-նա չըգան իքի թապուր աս-քէրլէրի գըրարագ, Սանապը գա-թիլէն մուհասէրէ իթմիշլէր տիր:

—Անատօլուտան 12 թապուր ասքէր Տէտէաղաճտան չըմէնտը-

ֆէրլէ էտիրնէ վէ Պուլկարիա սինթընա կէօնտէրիլիլ:

—Սուլթանըն էօմրինէ սուի գասթ վագասընը թահգիթ ի-տէն գամիսիօն տէվամի գալա-ճագ տըր:

Սէլամըգտա թիւրան պօմպա իշինտէ թիւրք վէ պուլկար պու-լընմաղըլը անլաշըլմը ըմըշ:

—Մաքէթոնիատա Սմէգէնի, Մարչիտա վէ Մօմիլա քէօյլէրին իքի կիւնտէն պէրու ալէֆլէր իշինտէ պուլընտըգարընը, պիւ-թիւն հայվանաթըն վէ էշեալա-րըն զասպ օլընտըգարընը վէ օնլարճա գատըն վէ չօճուգլարըն ըուս չէթալարընտան վուրուլ-տըգլարընը վէ սաղ գալանլարըն տաղլարա գաշմագտա պուլըն-տըգլարընը Բազարճըգտան պա թէլէկրաֆ պիլտիլիլիլ իտէտէ, պու միւսիլի հալաթիս թաստի-գէ միւսթաճ աստ օլընըյօր:

—Սէվաստաբօլտա վէ Լիպաու-տա իսթիլալ գալտըլմը օլան ասքէրլէրտէն 160 քիշի իտամա մահքիւմ օլուպ, գուրշուհա թու-թուլմուշլար տըր:

—Լինէվիշին օրտուսընտա 40000 եարէլի պուլընուպ, էն էվլէլ պուրալը վէ խասթալարը նագլ-իտէճէքլէր իմիշ:

—Պագուտա կաղ իշլէրի իլէ մէշպու օլան 11 շիւքէթլէր վէ 13 շախի ֆիրմալար գույուլա-րը վէ ֆագրիգալարը մահվ օլ-տըղընտան թաթիլի մասլահաթ իթմիշլէր տիր:

ԹԻԻՋՃԱՐՈՅԷ

ՎԱՌՆԱ	Սեպտ. 7
ՉԱԽԻՐԻ	
ՊՈՒՂՏԱՅ	
Վակօն 54-60 լիպ.	9.20 / 9. 80
Արապա 52-62 լիպ.	8. / 11.40
ԱՐԲԱ	
Վակօն 100 քիւ Կին	10. / 10. 40
Արապա Կէնի 42-47 լիպ.	6. / 6. 60
ԵՈՒՂԱՅ արապա 33/36 լիպ.	4. 40 / 4. 60
Վակօն 100 քիւ	10. / 10. 50
ՅԱՍՈՒԼԵԱ արապա 100 քիւ 24-30	
ՌԱԲԻՑԱ 100 »	19. 20 / 19. 60
Արապա 100 քիւ	16-18
ՏԱՐ արապա Կէքթ.	Եօգ
ԲՈՂՈՂ արապա 55-60 լիպ.	11. / 12. 20
ՄԻՍԻՐ 57-58 լիպ.	Եօգ
» 100 քիւ	11.20- 11. 90
ՉԱՎՏԱՐ արապա	8. 60 / 8. 80
» 100 քիւ	11. 80 / 12.
Կիւնտէ 50-60 վակօն վէ 600-700	
արապա կէլմէքտէ. վակօն մուսմէ-լէսի նաթօլէն20 ֆր. արապա մու-ամէլէսի նաթօլէն 20. 20	

ՍԱՐՐԱՅԻԹ:

Նաթօլէն 20, 20 ֆրանք
Օսմ. լիրասը 22, 75 ալթուն ֆրանք

Ա. Զ. Դ.

Գոլէժական-Երիտասարդ մր որ ըն-թաղաւարտ եղած է նաեւ Ամերիկեան բարձրագոյն վարժարանէ մը, իր պա-րագոյ ժամերուն տրամադիր է մաս-նաւոր դասեր տալ Անգլիէրէնի:

Պայմաններու մասին խմբագրութեան գիմիլ:

Одговорились А. Курбетиянъ
печатища Д. Тодорова и С-не—Варна